

ԳՐ . ՉԱԼԽՈՒՇԵԱՆԻ ՆՈՐ ԵՐԿԻ ԱՌԻԹՈՎ

«Հայկական հարցը եւ հայկական ջարդերը Ռուսաստանում» — մե
փոքրիկ բայց լուրջ աշխատանք յարգելի Գ. Չալսուշեանի արդիւնաւոր
գրչի : Պարոնը երկրորդ տնօրէն է, որ լոյս է հանում առաւելն ընդունով
մի գրութեան հայկական հարցին նուիրուած :

Յարգելի հեղինակը իր գրութեան ախտով է այն օրերից երբ Մեծն
Պետրոս Կասպից ծովի ափերին ջարդելով Պարսից զօրքերը, սիրով ընձ
դուռում է հայերին իր հովանաւորութեան տակ, լաւ հասկանալով, որ
նրանք քաղաքակրթութեան կորստեան են հանդիսանում այնպիսի
տեղերում, ուր մինչեւ այդ ամբողջութեամբ եւ աւաղակութեամբ
խաւարը աւաղակութեամբ :

Միապետի այս դադափարին համաձայն էին Ռուսիայի եւ միւս գաւ
հակալները եւ ունենալով այդ պատրուակը՝ արկարաց ընդունում էին
թիւրքերից ր Պարսկաստանից եւ Ղրիմից եկող հայերին եւ ընկալե
ցնում Ռուսաստանի ամայի տեղերում (Ն. Նախիջեւան, Գրիգորիօպոլ, Ղ
զլար, Մոզդուք, Ս. Քալ, եւ այլն) : Այդ ժամանակներում հայերը ազա
տուած էին տաւրքերից եւ վայելում էին Ռուսիոյ թագաւորներին մերջ
ու յարգանքը :

Այսպէս շարունակուեց մինչեւ 80 թուականները, միանգամայն չա
րադուշակ եւ անմոռանալի հայկական տարեգրութեան մէջ : Աւելցանգր
Բ-ի արաղիկական մահից յետոյ՝ Ռուսաստանում ամէն բան փոխուեց :
Ս. Պետրոսի քաղաքները վերացուեցին եւ այնուհետեւ Ռուսաստանում
սկսեց այն մահաշունչ հոսանքը ք որ պատմութեան մէջ յայտնի է
առաւելումն անունով : Սկսուեց հալածանք այն բոլոր տեղերի
դէմ, որոնք յաւակնութիւն էին ցոյց աւելի իրանց ինքնուրոյն կեան
քով ապրելու ր Դրանից զերծ չմնաց նաեւ Կովկասը, որտեղ այդ օրից
սկսած երեւան եկան զանազան ազգայնական հարցեր :

Կովկասում հայկական հարց չկար ասում է հեղինակը ր նա գո
յութիւն ունէր միմիայն թիւրքիայում : Սակայն մեր (Ռուսաց) բիւ
րոկրատիան արհեստական միջոցներով կարողացաւ ստեղծել այդպի
սին Ռուսաստանում միանգամայն ր հայերի կամքի եւ ցանկութեան
հակառակ :

Հայութիւնը ր մինչեւ այդ՝ կատարութեան աչքում հանդե
տանում էր իբրեւ խաղաղ եւ կուլտուրական տարր, 80 թուականներից

յետոյ յանկարծ դարձաւ հակակառավարչական , անհանդիստ եւ վտանգաւոր, որի առաջն ատենլու համար պէտք էր գիմել անհրաժեշտ միջոցները :

Յւ աշուհետեւ սկսուեց այդ «անհրաժեշտ միջոցները» գործադրութիւնը : Փակուեցին հայոց տարրական դպրոցները թուով 600ից աւելի, եւ փողոցում քնացին 900 ուսուցիչներ , 39000ից աւելի երկուսեռի երեխաներով : Յափշտակեցին ուսումնարանների կայքերը , փակուեցին բոլոր բարեգործական ընկերութիւնները եւ լուսաւորութեան նպաստող հիմնարկութիւնները : Յափշտակեցին վերջապէս եկեղեցական կալուածները, որոնց դրաւումը անագին խլրտուցի առաջ բերեց ամբողջ հովկասում , ռուբ , ասում է հեղինակը , մենք վկայ եղանք մի չտեսնուած իրողութեան : Հայերը, որոնք միշտ Ռուսաց դորքերը դիմաւորում էին խաչով ու աւետարանով , այժմ ընդունեցին նրանց քարերով ու հրացանների հարուածներով : Յետոյ , հեղինակը անցնում է Բագուի եւ Նախիջեւանի դէպքերին , եւ չէ մոռանում յիշատակել ուսսաց լաւագոյն մամուլի կարծիքները այս առթիւ : Բացատրում է թէ հայկական քարդերը արդիւնք են մի նախամտածուած ծրագրի, որին զոհ գնացին թէ՛ հայերը եւ թէ՛ իրանք թրքերը : Իբրեւ ապացոյց իր խօսքերի՝ հեղինակը ասում է , որ Երեւանի նահանգում գործուած են եղել բազմաթիւ պրօկլամիսիօններ թրքերէն լեզուով , կանանչ դրօշակներ զփահատ : Ժողովուրդները եւ գաղանի գրագրութիւններ , Բացի դրանից , հեղինակի կարծիքով քարդերի առաջ գալուն բաւական նպաստեց նաեւ կովկասեան ադմինիստրացիայի անտարբերութիւնը : «Եթէ ոստիկանութեան անտարբերութիւնը չլինէր , ասում է հեղինակը , այսպիսի մեծ արիւնահեղութիւն չէր կարող տեղի ունենալ : Սեւ իր տոածը ապացուցանելու համար բերում է Աշտարակ գիւղի դէպքը , որտեղ գաւառապետ Լիբերմանի ձեռք առած միջոցների շնորհիւ ոչինչ առաջ չեկաւ : Բացատրում է Ղուրաւի ասմունքը եւ նկարագրում է Պանխլամիզմի վտնգը ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար :

«Ի՞նչպէս պէտք է լուծուի հայկական հարցը, բացառանշում է վերջապէս հեղինակը . — Ազատելով կովկասը բոլոր այժմեան առանձնայատուկ օրէնքներից եւ կարգերից եւ հայերի վերայ չնայելով իբրեւ երկրի խորթ գաւաղներին վերայոյ, վերջացնում է նա : Դիքքը կարգացւում է մեծ հաճոյքով . եւ ցանկալի էր , որ իւրաքանչիւր հայ տարածէր նրան իր ծանօթ Ռուսների շրջանում :

Գ. Բ.